«Ձայն Հայրենեաց», գրական, քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել Նյու Յորքում, Բոստոնում և Կ. Պոլսում, 1899-1911 թթ.:

«Մասիս», ազգային քաղաքական, տնտեսական, գրական և բանասիրական շաբաթաթերթ, հետո՝ օրաթերթ: Լույս է տեսել 1852-1908 թթ. Կ. Պոլսում: Հիմնադրել է Կարապետ Ութուճյանը: 1888-ից՝ գրական հանդես:

«Մշակ», գրական, քաղաքական օրաթերթ: Լույս է տեսել 1872-1921 թթ. Թիֆլիսում: Հիմնադրել և մինչև 1892թ. խմբագրել է Գրիգոր Արծրունին:

«Մուրճ», հասարակական, քաղաքական և գրական ամսագիր: Լույս է տեսել 1889-1907 թթ. Թիֆլիսում: Մինչև 1900 թ. խմբագրել և հրատարակել է Ավետիք Արասխանյանը:

«Շանթ», գրական-գեղարվեստական կիսամյա, ապա շաբաթական հանդես: Լույս է տեսել Կ. Պոլսում, 1911-1915 և 1918-1919 թթ.:

«Շարժում», շաբաթաթերթ, հրատարակվել է Վառնայում (Բուլղարիա):

«Շիրակ», գրական, քաղաքական և հասարակական հանդես: Լույս է տեսել Ալեքսանդրիայում, Կահիրեյում, Կ. Պոլսում 1905-1907 թթ. և 1909 թ.:

«Ուստան», գրական, գիտական և մշակութային եռամսյա հանդես: Լույս է տեսել Կ. Պոլսում, 1911-1912 թթ. և 1919-1922 թթ.:

«Ռազմիկ», ազգային-գիտական և քաղաքական-հասարակական լրագիր: Լույս է տեսել Ֆիլիպեում (Բուլղարիա), 1905-1909 թթ.:

«Վաղուան Ձայն», ազգային և գրական հանդես: Լույս է տեսել Մանչեսթերում (Անգլիա):

“Mercure de France” («Մերքիւր տը Ֆրանս»), գրական հանդես, հրատարակվում է Փարիզում, 1672 թ. (ընդմիջումներով):